*ՆԱԽԱԳԻԾ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ութերորդ գումարման երկրորդ նստաշրջանի օրակարգում ընդգրկել պարտադիր քննարկման ենթակա հետեւյալ հարցերը.

| | **Հարցի անվանումը** | **Կոդը և հեղինակները** |
|---|---|---|
| **1.** | Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուի ընտրություն | **983**-25.05.2021- |
| **2.** | Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության մասին հաղորդում | **1010**-28.07.2021- |
| **3.** | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի ընտրություն | **016**-03.09.2021- |
| **4.** | Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամի ընտրություն | **019**-09.09.2021- |

2. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ութերորդ գումարման երկրորդ նստաշրջանի օրակարգում ընդգրկել գլխադասային հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն ստացած հետեւյալ հարցերը.

| **Հարցի անվանումը** | **Կոդը և հեղինակները** |
|---|---|

3. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ութերորդ գումարման երկրորդ նստաշրջանի օրակարգում ընդգրկել գլխադասային հանձնաժողովի կողմից բացասական եզրակացություն ստացած, ինչպես նաեւ Կանոնակարգով սահմանված ժամկետում եզրակացություն չստացած հետեւյալ հարցերը.

| | **Հարցի անվանումը** | **Կոդը և հեղինակները** |
|---|---|---|
| **1.** | «Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին» Ազգային ժողովի որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին | Խ-**001**-13.08.2021-ՊԻ-012/0<br>Հեղինակ՝«Հայաստան» խմբակցություն |